Արձանագրություն N 1-1

ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 06.07.2020թ.
ժամը 17:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահող՝ Դ. Շատվերյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Եղիազարյան
Գ. Գևորգյան
Ար. Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան
Բացակայում էր՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Միրզոյան

1. ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում փոփոխություն կատարելու մասին

(Դ. Շատվերյան)

1.1 ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման համար կազմված և հրապարակված ծավալաթերթում և նյութերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետների հավելվածներում ի հայտ եկած վրիպակները շտկելու նպատակով պատասխանատու ստորաբաժանման կողմից 03.07.2020թ. ներկայացված գրությամբ առաջարկվել է գնման առարկայի ծավալաթերթում և նյութերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետների հավելվածներում կատարել փոփոխություններ:

1.2 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ կետը, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 14-րդ կետի 2-րդ ենթակետը, ինչպես նաև պատասխանատու ստորաբաժանման 03.07.2020թ. գրությունը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում կատարել փոփոխություն, հաստատել նշված ընթացակարգի հայտարարության, հրավերի և հրավերում փոփոխություններ կատարելու մասին հայտարարության տեքստերը և 24.06.2020թ. հայտարարված մրցույթը վերահայտարարել՝ նոր փոփոխված ծավալաթերթի և նյութերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետների հավելվածների ներառմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

Հանձնաժողովի
Նախագահող՝ ---------- Դ. Շատվերյան

Անդամ՝ ---------- Ռ. Եղիազարյան

---------- Գ. Գևորգյան

---------- Ար. Գրիգորյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերում փոփոխություններ կատարելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2020 թվականի հուլիսի 6-ի N 1-1 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

Փոփոխության առաջացման պատճառ N1	*Գնման հայտը կազմած պատասխանատու ստորաբաժանման գրությամբ ներկայացված առաջարկությունը*
Փոփոխության նկարագրություն	*Գնման առարկայի ծավալաթերթում և նյութերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետների հավելվածներում ի հայտ եկած վրիպակները շտկելու նպատակով նշված հավելվածներում կատարվել են փոփոխություններ:*
Փոփոխության հիմնավորում	*ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 14-րդ կետի 2-րդ ենթակետ*
Փոփոխության առաջացման պատճառ N2	*Գնման հայտը կազմած պատասխանատու ստորաբաժանման գրությամբ ներկայացված առաջարկությունը*
Փոփոխության նկարագրություն	*Փոփոխվել է հայտերի ներկայացման վերջնաժամկետը:*
Փոփոխության հիմնավորում	*ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 14-րդ կետի 2-րդ ենթակետ*

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Տաթևիկ Վասիլյանին:

Հեռախոս՝ (011) 621 821

Էլեկտրանային փոստ՝ tender2@minurban.am կամ urbanpiu.gnumner7@gmail.com

ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով